

Չուզահեռներ՝ Լեռնային Ղարաբաղի Եւ Զոսովոյի Միջեւ

ՅԱՅԱՍՏԱՆԻ ԸՈՍՈՎՈՅԻ ՆԱԽԱԴԵՊԸ ԱՆՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ Ե ՄԱՏՆԻՈՒՄ

Յայաստանի նախագահական ընտրութիւնները եւ դրան յաջորդած Լեռնային Ղարաբաղի ճգնաժամը ստուերնց միջազգային ասպարեզում գրանցուած մի չափազանց կարեւոր իրադարձութիւն՝ կապուած Զոսովոյի անկախութեան ճանաչման հետ: Զոսովեան թեման հայկական պետական եւ քաղաքական շրջանակներում կարող էր անուշադրութեան մատնուել, եթէ Յայաստանը չունենար դարաբաղեան խնդիր: Զոսովոյի միակողմանի ճանաչումը մի քանի տասնեակ երկրների, այդ թումը նաեւ աշխարհի գերիգոր Միացեալ Նահանգների եւ Եւրոմիութեան առաջատար պետութիւնների կողմից կոր առճակատման պատճառ դարձան Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ: Անգամ հակասութիւններ առաջացան ցեղային, լեզուական եւ կրօնական ընդհանրութիւններ ունեցող եւ ռազմաքաղաքական դաշնակիցներ համարուող Թուրքիայի եւ Ատրպէյճանի միջեւ: Եթէ Անգարան ճանաչէր այսպէսով աշխարհային երկրամասը, ապա Պաքստանը՝ ի նշան բողոքի, այնտեղից դուրս բերեց իր խաղաղարար ուժերին, որոնք, ի դէպ, գտնուում էին թուրքական հիմնաստորութեան ներքոյ:

Մարտի 13ին Ռազմավարական եւ ազգային հետազոտութիւնների հայկական կենտրոնում սեմինար-քննարկում էր կազմակերպուել «Զոսովոյի նախադէպը. կիրառելի» եւ այն Արցախի դէպքում» թեմայով: Խնդիրն անդրադարձ եղաւ մի քանի կողմերով: Յիմասկան գեկուցողները երեքն էին. Լեռնային Ղարաբաղի Յանրապետութեան նախկին արտաքին գործերի նախարար Արման Մելիքեանը, Ազգային ժողովի պատգամաւոր, Ժառանգութիւն խմբակցութեան քարտուղար Ստեփան Սաֆարեանը, եւ ԱՄԿ կուսակցութեան ղեկավար Շաւարշ Զոչարեանը:

Ստեփան Սաֆարեանը, ում կուսակցութիւնը Ազգային ժողովը նախագահ եւ ներկայացրել Յայաստանի կողմից ԼՂՀի ճանաչման վերաբերեալ, մտահոգիչ համարեց պաշտօնական Երեւանի կողմից արուող յայտարարութիւնները, թէ Զոսովոյի չի կարող լինել նախադէպ Լեռնային Ղարաբաղի դէպքում: Այն ժամանակ Սաֆարեանի կարծիքով, Յայաստանը պետք է աշխուժօրէն այն տեսակետը առաջ պահել, որ ոչ թէ Զոսովոյն է նախադէպ, այլ ԼՂՀն է նախադէպ Զոսովոյի համար:

«Լեռնային Ղարաբաղը ապագադրութեամբ օրինակ է ոչ միայն Զոսովոյի, այլ շատ երկրների համար: Ղարաբաղի վերադարձը դէպի անցեալ անշքեղի է, առարկայական ու ենթակայական առումներով՝ անհնար: Մենք՝ Ժառանգութեան կուսակցութիւնը, կողմակից ենք Յայաստանի կողմից ԼՂՀի ճանաչմանը», աւսաց պատգամաւորը «Նախադէպ, թէ՛ երկակի չափանիշների եւս մէկ օրինակ» գեկուցող ներկայացնելու ընթացքում:

Յիշեցնենք, որ Երեւանը բարձր մակարդակով բազմիցս յայտարարել է, որ չնայած Ղարաբաղի եւ Զոսովոյի միջեւ եղած պատմական, քաղաքական, իրաւական տարբերութիւններին, Զոսովոյի անկախացումը չի կարող չանդարձաբար Լեռնային Ղարաբաղի միջազգային ճանաչման գործընթացի վրայ: Ընդ որում, նկատենք, բարձրաստիճան հայ պաշտօնեաները միակարծիք չեն Զոսովոյի եւ Ղարաբաղի միջեւ գուցահեռներ տանելու հարցում:

Նախագահ Ռոպերթ Զոչարեանը 2006թ. Մարտին հարցազրոյցում ասել էր, որ ընդհանրապէս, շատ դրական է համարում այն միտումները, որոնք աշխարհում կան Զոսովոյի նման հակամարտութիւնների կարգաւորման շուրջ: «Շատ աւելի մեծ ուշադրութիւն է դարձնում ազգերի ինքնորոշման սկզբունքին: Եթէ փորձեն յետադարձ հայեացքով գնահատել վերջին տարիներին կարգաւորուած, լուծում ստացած հակամարտութիւնները, կը տեսնենք, որ բոլորը հենց այդ սկզբունքով են՝ Երիթթեայի անկախութիւնը, Արեւելեան Թիմորի անկախութիւնը՝ հանրաքուէի ճանապարհով, այն ինչ կատարուում է այսօր Զոսովոյում, ուել մէկը գրեթէ կասկած չունի, թէ ինչ հակագոյալուծում է ստանալու այս հակամարտութիւնը: Յանրա-

քուէ է սպասուում Մոսկոյից, Պաղեստինի պետութեան հարցն այլեւս ոչ մէկի համար կասկած չի առաջացնում, Նոյնիսկ Իսրայէլի իշխանութիւնների համար, Սուսանում ստորագրուած պայմանագիրը իրականաբար հակամարտութեան շուրջ: Բոլոր այս հակամարտութիւնների կարգաւորման սկզբունքը ինքնորոշման իրաւունքի կիրառումն է: Այդ առումով, տարեցտարի մեր դիրքերը բանակցային գործընթացում ուժեղանում են: Շատ աւելի հեշտ է այսօր խօսել Լեռնային Ղարաբաղի հարցի կարգաւորման շուրջ, սկզբունքների, պարզաբանումների առումով դրաի աշխարհի հետ: Միտումները դրական են, եւ բոլորը հասկանում են, որ տարածքային ամբողջականութիւնը, շատ կարեւոր սկզբունք լինելով հանդերձ, շատ դժբերում օգտագործում է որպէս ազգային փոքրամասնութիւնների բռնութիւնների նթադրելիք արդարացիորէ միջոց: Ուրեմն, այդ տեսանկիւնից շատ աւելի լաւատեսական են նայում բանակցային գործընթացի շարունակութեանը, քանի որ այն օրինակները, որոնք այսօր կան, հնարաւորութեան են ստեղծում նաեւ մեզ համար աւելի արջիւ աշխատելու այդ ուղղութեամբ», ասել էր նախագահ Զոչարեանը:

Յայաստանի վարչապետ Սերժ Սարգսեանը Մարտի 12ին, ուսանողների հետ հանդիպման ընթացքում ասել է. «Մենք պիտի չհամարենք Զոսովոյն նախադէպ մեզ համար այն առումով, որ Ղարաբաղի խնդիրն Եպպետ տարբերում է բոլոր խնդիրներից: Ղարաբաղն անկախութիւն է ստացել համաձայն Խորհրդային Միութեան գործող օրէնքների, այսինքն իրաւաբանական, իրաւունքի տեսակետից տարբերում է բոլոր այդպիսի վայրերից, տազանակներին, եւ մենք իրաւունք չունենք որեւէ մէկի հետ հաւասարեցնել, խառնել: Յետոյ նախադէպ չենք համարում նաեւ այն առումով, որ մենք տեսնելի ապագայում չենք պատրաստուում ճանաչել ԼՂ անկախութիւնը: Բայց քանի որ մենք մշտապէս կողմակից ենք ժողովուրդների ինքնորոշման իրաւունքի ազատ իրականացմանն, այս առումով, անշուշտ, Զոսովոյի անկախութիւնը մեր կողմից ողջունուում է»:

2007թ. Յունիսի 29ին արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանեանը յայտարարեց, որ հայկական կողմը չի քննարկում Զոսովոյի նախադէպի օգտագործման հնարաւորութիւնը Ղարաբաղի դէպքում, քանի որ «մենք չգիտենք, թէ ինչով կ'աւարտուի ամէս ինչ»: «Եթէ այնպէս ստացուի, որ Զոսովոյն անկախութիւն ստանայ, իսկ Մ. Նահանգները ասեն, որ այլեւս ոչ մէկին անկախութիւն չի տրուի, ապա դա վնաս է: Կը տեսնուի, որ ինչ-որ մէկը կարող է անկախ լինել, իսկ մնացածը՝ ոչ: Եթէ Զոսովոյին անկախութիւն չտրամադրեն, որը եւս վնաս է», ասել էր Օսկանեանը՝ յաւելելով, որ՝ «Յայաստանն այլ ուղի ունի, որը նթադրում է բանակցութիւնների միջոցով որոշել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը՝ ելնելով ԼՂՀ բնակչութեան կամքից: Մենք չենք նայում այլ հակամարտութիւններին»:

Ի դէպ, Արեւմուտքում յստակ ընդգծում են, որ Զոսովոյի չի կարող նախադէպ լինել այլ մասնաւորապէս ԱՊՀ տարածքի «սառնեցում» հակամարտութիւնների համար: Ազգում Ռուսաստանը ընդդիմացաւ, ապա սպառնաց, թէ կարող է ճանաչել Արցախի անկախութիւնը, սակայն որոշ ժամանակ անց փափկեցրեց իր դիրքորոշումը:

Լեռնային Ղարաբաղի նախկին արտաքին գործերի նախարար Արման Մելիքեանը «Յայեացք Երեւանից. Զոսովոյի ճանաչել-չճանաչելու հարցում Յայաստանի դիրքորոշումը» գեկուցումը ընդգծեց, որ միջազգային շահերի տեսանկիւնից Լեռնային Ղարաբաղի, Զոսովոյի, Արցախի միջազգային դէպքերը տարբեր են:

«Յայաստանը պետք է ճանաչի ԼՂՀն, այլ ոչ թէ նրա ինքնորոշման իրաւունքը, ինչպէս ասում է: ԼՂՀն իր ինքնորոշման իրաւունքը արդէն իրականացրել է: Մենք 20 տարի չենք կարողանում պարզել՝ ԼՂՀն անկախ՞ է, թէ՛ Յայաստանի մաս: Երեւանը պետք է յստակ ար-

տայայտուի: Մեր ընդդիմախօսներն ասում են, եթէ Յայաստանը չի ճանաչում, ապա մենք ինչո՞ւ ճանաչենք», նկատեց Մելիքեանը:

Շաւարշ Զոչարեանը իր ելոյթում, որը վերաբարում էր՝ «ՌՂԷ Եւ Եւրոպայի պատրաստ անկախութեան. գուցահեռներ Արցախի եւ Զոսովոյի միջեւ», նախ ժխտեցրեց, որ դեռ 1992թ. Յայաստանի այն ժամանակուան Գերագոյն խորհրդում ընդդիմութիւնը փորձում էր հասնել Լեռնային Ղարաբաղի ճանաչմանը, սակայն գործող վարչապետը դեմ դուրս եկաւ: Միւս կողմից, ԱՄԿ առաջնորդը շեշտեց, որ Յայաստանի կողմից ԼՂՀի ճանաչումը պետք է ընկալուի որպէս պարտուած կողմի՝ դուռը փակելու շրջան: Զոչարեանը բերեց մի շարք փաստարկներ՝ պնդելու իր տեսակետը առ այն, որ ԼՂՀն աւելի պատրաստ է անկախութեան, քան Զոսովոյն:

Իրաւական տեսակետից, ըստ Զոչարեանի, ԼՂՀն իր անկախութիւնը իրականացրել է անթերի՝ պահպանելով այն ժամանակ դեռ գոյութիւն ունեցող պետութեան՝ ԽՍՀՄ օրէնքների տառն ու ոգին: «Նախկին Խորհրդային պետութեան տարածքում ձեւաւորուեցին երկու հանրապետութիւններ՝ Ատրպէյճանը եւ Լեռնային Ղարաբաղը, ընդ որում, եթէ արցախցիները անկախութեան հանրաքուէ անցկացրին 1991թ. Դեկտեմբերի 10ին, ապա Ատրպէյճանը ինչո՞ք օր յետոյ՝ Դեկտեմբերի 15ին»:

Զոչարեանը ընդգծեց, որ ԼՂՀն իր անկախութիւնը կարողացել է պաշտպանել Ատրպէյճանի ոտնձգութիւններից, անշուշտ, Յայաստանի օգնութեամբ, մինչդեռ Զոսովոյի դէպքում դա արել են միջազգային ուժերը: Կառավարման համակարգը, ժողովրդավարական աստիճանը Ղարաբաղում եպպեց բարուր է՝ համեմատած Զոսովոյի հետ: Եթէ Զոսովոյն իր ժողովրդավարական աստիճանով անկախութիւն գիշում է Սերպիային, որից անջատուել է, ապա Ղարաբաղը աւելի ժողովրդավար է, քան Ատրպէյճանը:

Լեռնային Ղարաբաղը օտարերկրեայ խնդրական օժանդակութիւն չի ստացել, բացի Յայաստանի կողմից տարեկան տուող միջաջտակական վարկը եւ 1998թ. ի վեր ամերիկեան ուղղակի օգնութիւնը, եւ փաստացի կարողացել է գոյատեւել ինքնուրույն, մինչդեռ Զոսովոյն վերջին տարիներին ստացել է երեք միլիարտ եւրոյի միջազգային օժանդակութիւն:

Երեք բանախօսներն էլ պնդեցին, որ նախ եւ առաջ Յայաստանը պետք է ճանաչի Ղարաբաղին, ապա յոյնը պահանջի այլ երկրներից: Սակայն այստեղ առաջ է գալիս միջազգայնօրէն ստանձնած պարտաւորութիւնների կատարման ընթացքի հետ խնդիր: Դեռ 1992թ. Մարտին Յայաստանը ԵԱՀԿի առաջ ստանձնեց է պարտաւորութիւն, համաձայն որի Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը պետք է որոշուի Միջազգային խորհրդածողովի շրջանակներում, այսինքն բանակցութիւնների արդիւնքում պետք է յստակեցուի ԼՂՀ ապագայ կարգավիճակը: Բացի այդ, ո՞ր տարածքով պետք է Յայաստանը ճանաչի ԼՂՀն՝ նախկին ԼՂԻՄի, այսօրուան, թէ մէկ այլ:

Բանախօսները նկատեցին, որ ԼՂՀ սահմանների հարցը պետք է թողնել ԼՂՀի իրաւաստութեանը: Ինչ վերաբերում է Յայաստանի կողմից միակողմանի ճանաչման, ապա Ատրպէյճանը ինքն է ամէն օր յայտարարում, որ Ղարաբաղը չի կարող լինել Ատրպէյճանի կազմից դուրս, աւելին՝ սպառնում հարցը լուծել ռազմական ճանապարհով:

Ի՞նչ դիրքորոշում պետք է ունենայ Յայաստանը Զոսովոյն ճանաչել-չճանաչելու հարցում: Վարդան Օսկանեանը վերջերս յայտարարել է, որ այդ հարցին Երեւանը կ'անդարձաբար աւելի յարմար ժամանակ: Իսկ սհա վարչապետ Սերժ Սարգսեանը ուսանողների հետ հանդիպման ընթացքում կարծիք է յայտնել, որ Զոսովոյի անկախութիւնը ճանաչելու դէպքում Երեւանի եւ Մոսկուայի յարաբերութիւնները չեն փոճանում:

Զոսովոյի խորհրդարանը Փետրուարի 17-ին միակողմանիօրէն հռչակեց երկրամասի անկախութիւնը եւ անջատումը Սերպիայից, որին ի պատասխան Ղարաբաղը յայտարարեց, որ երբեք չի ճանաչի Զոսովոյի անկախութիւնը:

Այնչայտօրէն, Ղարաբաղի եւ Զոսովոյի խնդիրները միմեանցից տարբերում են իրաւական, պատմական եւ այլ չափանիշներով, սակայն գլխաւորը հարցի քաղաքական եւ աշխարհաքաղաքական կողմն է: Զոսովոյի դէպքում Արեւմուտքը յստակ իր առջեւ խնդիր էր դրել ճանաչել երկրամասը, ինչը այսօր իրողութիւն է դառնում: ՄԱԿի Ապահովութեան Խորհրդի մշտական հինգ անդամներից երկուսը՝ Ռուսաստանը, մասաթը նաեւ՝ Չինաստանը, դեմ են Զոսովոյի միակողմանի ճանաչմանը: Այդ էր պատճառը, որ Զոսովոյի ճանաչման գործընթացը դուրս բերուեց ՄԱԿի շրջանակներից:

Այսպիսով, Զոսովոյի եւ Ղարաբաղի հիմնական տարբերութիւնը հենց վերոնշեալն է, այսինքն մի դէպքում Արեւմուտքը շահագործել է երկրամասի ճանաչման հարցում, միւս դէպքում՝ առայժմ ոչ: Պետք է նկատել նաեւ, որ ի տարբերութիւն ԱՊՀ այլ «սառնեցում» հակամարտութիւնների, Արեւմուտքը յստակ տարբերութիւն է դնում Ղարաբաղի եւ նրանց՝ Արցախի, Յարաւային Օսթիայի եւ Մերձկասպի միջեւ: Եթէ վերջին երեքի դէպքում Մ. Նահանգներն ու Եւրոմիութիւնը յստակօրէն ընդգծում են, որ պետք է պահպանուի համապատասխանաբար Վրաստանի եւ Մոլդաւիոյ տարածքային ամբողջականութիւնը, ապա Ատրպէյճանի դէպքում ասում է, որ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակը պետք է որոշուի բանակցութիւնների արդիւնքում:

Ի՞նչ այլ առանելութիւններ ունի Զոսովոյն Ղարաբաղի նկատմամբ: Անշուշտ ինքնին Երրպայի կենտրոնական հատուածում գտնուելու իրողութիւնը Զոսովոյին առանելութիւն տալիս է: Այլեւս անկայտ է, որ եթէ ԵՄՍ կամ կազմակերպութեան առաջատար պետութիւնները ճանաչել են երկրամասի անկախութիւնը, ապա Զոսովոյի ապագան հենց ԵՄԻ եւ ԱՄԹԻ կազմում է, ինչն արդէն իսկ չափանիշ է: Բացի այդ, մօտ 11 հազար քառակուսի քիլոմետր տարածքով Զոսովոյն ունի գրեթէ 2 միլիոն բնակչութիւն: Ուշադրութեան դարձնենք, այսօրուան ԼՂՀն տարածքով աւելի մեծ է, քան Զոսովոյն, սակայն ունի մօտ 15 անգամ պակաս բնակչութիւն: Այսինքն՝ եթէ ապանախնդիր համար Զոսովոյն կենսատարածք է, ապա՝ Լեռնային Ղարաբաղի դէպքում, յամեմախնդաբ, տե՛-Ֆաթթօ կրա վերահսկելի տարածքի մեծ մասը անկտանգութեան գօտի է:

Անշուշտ, Ղարաբաղն իր հերթին ունի առանելութիւններ Զոսովոյի նկատմամբ: Մի կողմ թողնենք հարցի պատմական կողմը, որովհետեւ միջազգային յարաբերութիւններում եւ այսպէս կոչուած «ռեալ փոխիջրջալում» կարեւորը ոչ թէ պատմութիւնն է, այլ՝ ներկայն: Որ Ղարաբաղը հնուց ի վեր բնակեցուած է եղել հայերով, ինչպէս այսօր, իսկ Զոսովոյն համարում է սերպերի բնօրանը, սա աւելի շատ պատմաբանների խնդիր է:

Ղարաբաղի անկախանալու իրաւական հիմքերը, ինչպէս նաեւ ԽՍՀՄի փլուզման ժամանակահատուածում նրա անկախութիւնն առաճումը, թէեւ դեռ միջազգայնօրէն չճանաչուած, անխոցելի են: Եթէ նախորդ երկու տասնամեակներում Ղարաբաղը ինքնուրույն եւս կամ Յայաստանի օգնութեամբ է ապացուցել իր կենսունակութիւնը, ասել է, թէ՛ պաշտպանուելու ընդունակութիւնը, ժողովրդավարական հաստատութիւններ հիմնելու, ընտրութիւններ անցկացնելու մեթաւիզմները, ապա Զոսովոյն դրանք արել է միջազգային ուժերի եւ Լուիսատու կազմակերպութիւնների օգնութեամբ:

Եւ ամենախաբերուող. եթէ Զոսովոյն պակաս ժողովրդավար է, քան Սերպիան, ապա Ղարաբաղը, ըստ «Ֆիրտըմ հաուսի» գնահատման, աւելի ժողովրդավար է, քան Ատրպէյճանը: Սա չափազանց կարեւոր գործօս է եւ հայկական կողմի կարեւոր առաճումներից մէկը: Բացի այդ, դժուար է իշել դէպքեր, երբ մեթոդիկալից անկախութիւն, ընդ որում՝ արիւնակի պատերազմի արդիւնքում, ստացած միաւորը ցանկութիւն ունենայ կրկին լինել կրա մի մասը:

ԹԱԹՈՒՆ ՅԱՎՈՒԵԱՆ

Այլէ Հիւրի Զգայացումը Յօդուածը "Թարսֆ" Թերթի Մէջ "1914-ԷՆ ՎԵՐՋ ՈՐՈ՞ՆՔ ՆՍՏԱՆ ՀԱՅԵՐՈՒ ԻՆՉՔԵՐՈՒՆ ՎՐԱՑ"

Յայտնի հրատարակագիր Այլէ Հիւր «Թարսֆ» թերթին մէջ ունէր ամբողջ էջի վրայ փորձած եւ խիզախ մերձեցումով գրի առնուած յօդուած մը, որով կան հարց կրու տար թէ՛ որո՞ւմք նստան հայկական ապրանքներու վրայ: Այնպիսիքինը կ'երթար բնականաբար 1915-ի տեղաբնակութեան ընթացքին հաշիւը կողմէ լքուած կարուածներում, ազգիներում, ուսկիներում ու դրամներում, որոնք թուրքի վրայ հրաշալի հրաւանագներու համաձայն իբրեւ թէ պիտի պաշտպանուէին ու տերերում պիտի վերադարձուէին, որոնք ասկայն աւելի վերջ լքուած ապրանք նկատուեցան ու գրաւուեցան պետութեան կողմէ կամ թալանուեցան զանազաններու ձեռքով: Այլէ Հիւր ծանօթ անձնօթ շատ հետաքրքրական բազմաթի տեղեկութիւններ կու տայ եւ ամէնէն վերջ կ'ըսէ թէ հասկըցողին շատ քան կ'ըսեն այս բոլորը:

Այդ շրջանին հայերու կողմէ լքուած ապրանքներու համար բազմաթիւ անհանգցներու մէջ հիմնուեցան երկու պատական գամնիք բնագծեր ու մէկ եւ լեւնտական բնագիշ կազմուած յանձնախումբեր: Իթթի-հատականներու առաջատար դէմքերէն Աճմետ Ռոչապ Պլշ այդ օրերում դիտել տուաւ, որ այս ապրանքները լքեալ գոյք չէին կրնար նկատուիլ, որովհետեւ հայերը զանգեց իրենց յօժար կամքով լքած չէին, այլ պարտաւորուած էին լքել: Բայց ո՞չ մէկը ակամջ տուաւ այս առարկութեան: Պատկան իշխանութիւնները իբրեւ թէ լքուած տուները կը կրպէին ու ապրանքներն ալ կ'արձանագրէին, բայց զիջերները ներսի բոլոր արժէքաւոր ապրանքները կը կողոպտուէին անձանցօթերու կողմէ:

Ապա յօդուածագիրը կ'ընէ հետաքրքրական դիտողութիւն մը: Կը գրէ որ թէեւ պաշտօնական տե-

սակետի պատմաբանները շատ կը հպարտանան պնդելով, որ պետութիւնը հայերու կարուածներում իրաւունքները պաշտպանելու ձեւեր նախատեսած էր, բայց բոլոր անոնք, որոնք կը հետաքրքրուին թէ ի՞նչ եղաւ այդ միջոցառումներում պիտիմը, կրճանք ըսել որ ո՞չ մէկ բան պաշտպանուեցաւ, որովհետեւ հայերը որոնք մէկ ժամուան կամ շատ կարճ ժամանակի մէջ կը քշուէին դէպի արտու, ժամանակ չուէին որեւէ դիմում կատարելու: Հայերէ գրաւուած ապրանքներում վրայ ձեռք կը դնէին թուրք, քիւրա եւ չէրբէց յառաջադէմ անձեր կամ պարքաններէն բերուած գաղթականներ: Նպաստակը ստղծել էր թուրք ու մահմետական մոր դրամներէր, այս պատճառաւ ալ կարուածները կը վաճառուէին շատ ցած գներով, երբեմն ալ ձրի կը յանձնուէին:

Այլէ Հիւր ցնցիչ օրինակներ կու տայ այդ շրջանի պատահարներէն. օրինակ ի՞նչ ըրին Ազգային Պարսիի (Միլիո Միւնամեթ) յառաջապահները, որոնք կը պնդէին թէ սանացիներու շարունակութիւնը չէին: Բան մըն ալ չըրին կացութ